ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«Մարտունու համայնքապետարան»-ի կարիքների համար ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09 ծածկագրով «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար Շչակների /ազդարարման համակարգերի/» ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ձևով էլեկտրոնային Armeps համակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Մարտունի

«07»«05» 2025թ
ժամը 10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Թաթուլ Դավթյան ,անդամներ՝ Սահակ Աբրոյան, Իգոր Գևորգյան, Արտյոմ Քոչարյան, Վահան Թամոյան, քարտուղար Արթուր Գրիգորյան

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

1.1 Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1.2 Ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. Գնահատող հանձնաժողովի «26»«03» 2025թ. Թիվ 2 նիստով ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/09 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ն: 2025 թվականի ապրիլի 17-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը martunignum@mail.ru էլեկտրոնային փոստի միջոցով:Օրենքով սահմանված կարգով 5 աշխատանքային օրում «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ն Մարտունու համայնքապետարան չի ներկայացրել պայմանագրի նախագիծը (որակավորման և պայմանագրի ապահովումները):

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի բ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին՝ :

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2 Սույն ընթացակարգի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր, և անգործության ժամկետի ավարտից հետո, հրավերով նախատեսված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Թաթուլ Դավթյան

Անդամներ՝ _____ Սահակ Աբրոյան

_____ Արտյոմ Քոչարյան

_____ Իգոր Գևորգյան

_____ Վահան Թամոյան

Քարտուղար՝ _____ Արթուր Գրիգորյան